Հաշվետվություն

ՀՀ Տավուշի մարզպետ Հ. Զոբանյանի գլխավորած պատվիրակության Չեխիայի Հանրապետության Հրադեց Կրալովե երկրամաս գործուղման արդյունքների մասին

Հայկ Զոբանյան – ՀՀ Տավուշի մարզպետ
Աղաբեկ Գալստյան – Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՀԳՄ ՏՍ համակարգման բաժնի վարիչ
Գուրգեն Հարությունյան – Տավուշի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի վարիչ
07–09 մարտի 2019թ. Չեխիայի Հանրապետության Հրադեց Կրալովե երկրամաս Հրադեց Կրալովեի նահանգապետ Յիրժի Շտեպան
Հայ-չեխական ապակենտրոնացված միջտարածաշրջանային համագործակցության շրջանակներում Չեխիայի Հանրապետության Հրադեց Կրալովե երկրամասի Հրադեց Կրալովե քաղաքում անցկացված <<Ինֆոտուր>> միջազգային զբոսաշրջային ցուցահանդես-տոնավաճառին մասնակցության, Տավուշի մարզի զբոսաշրջային հնարավորությունների և ներուժի ներկայացման ու տնտեսության տարբեր ոլորտներում փոխշահավետ համագործակցության, ինչպես նաև գործարար կապերի զարգացման նպատակով:
Հրադեց Կրալովե երկրամասի նահանգապետի և այլ քաղաքական ղեկավարների հետ հանդիպումների ընթացքում քննարկվել են երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող հարցեր՝ արդյունաբերության, առողջապահության, կրթության, մշակույթի, զբոսաշրջության ոլորտներում համագործակցության, գործարար կապերի հաստատման և զարգացման ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների, մասնագետների վերապատրաստման, փորձի փոխանակման և այլնի վերաբերյալ:
Մարտի 7-ին տեղի է ունեցել հանդիպում Չեխիայի Հանրապետության արտաքին գործերի նախարար Տոմաշ Պետրժիչեկի հետ: Հանդիպմանը մասնակցում էր նաև Չեխիայում ՀՀ արտակարգ ու լիազոր դեսպան Աշոտ Հովակիմյանը, պաշտոնական հյուրեր Սլովակիայից, Լեհաստանից, Ուկրաինայից, Սերբիայից, Խորվաթիայից և այլոք:
Մարտի 8-ին Հրադեց Կրալովեի <<Ալդիս Կոնգրես կենտրոնում>> տեղի ունեցավ <<Ինֆոտուր>> ցուցահանդես-տոնավաճառի պաշտոնական բացման արարողությունը, որի ընթացքում բացման խոսքով հանդես եկավ նաև Չեխիայում ՀՀ արտակարգ ու լիազոր դեսպան Աշոտ Հովակիմյանը, ով նշեց այսպիսի միջոցառումների կարևորությունը, որոնք հնարավորություն են տալիս բարեկամ մարզերին ավելի խորացնելու համագործակցությունը և միաժամանակ ներկայանալ միջազգային

հանրությանը և ավելի մեծ հեռանկարներ է ստեղծվում համատեղ ծրագրեր իրականացնելու համար: Այնուհետև տեղի ունեցավ հայկական տաղավարի պաշտոնական բացումը, ինչպես նաև Հայաստանի՝ մասնավորապես Տավուշի մարզի ներկայացումը ցուցահանդես-տոնավաճառի մասնակիցներին ու հյուրերին: Ներկայացմանը բացման խոսքով հանդես եկավ ՀՀ Տավուշի մարզպետ Հայկ Չոբանյանը: Շնորհակալություն հայտնելով չեխական կողմին ընձեռված հնարավորության համար Տավուշի մարզպետը նշեց, որ ցուցահանդես-տոնավաճառին մասնակցությունը նոր խթան կահանդիսանա հայ-չեխական բարեկամության ամրապնդման գործընթացում՝ մասնավորապես Տավուշի մարզի և Հրադեց Կրալովե երկրամասի միջև, ինչպես նաև նոր գործընկերներ գտնելու, նոր կապեր հաստատելու և, որ այն հարմար առիթ է Տավուշի մարզը միջազգային հարթակում ներկայացնելու համար: Մանրամասն ներայացվեցին Տավուշի մարզի զբոսաշրջային հնարավորությունները, ինչպես նաև համագործակցության հեռանկարները: Հայկական տաղավարում ցուցահանդեսի մասնակիցներին ու այցելուներին տրվեց մանրամասն տեղեկատվություն զբոսաշրջության տարբեր ճյուղերում Տավուշի մարզի ներուժի և հնարավորությունների մասին: Ներկայացվեցին մարզի աշխարհագրական ու տնտեսական տվյալները, զբոսաշրջային կենտրոնները, հանգստյան տները, տեղեկատվություն, որն ընդհանրապես գրավում ու հետաքրքրում է օտարերկրյա զբոսաշրջիկներին:

Տեղի ունեցան քննարկումներ միջատարածաշրջանային ապակենտրոնացված համագործակցություն սկսելու և այդ շրջանակներում, մասնավորապես զբոսաշրջության ոլորտում համատեղ ծրագրեր նախաձեռնելու ու իրականացնելու հնարավորությունների մասին՝ Ուկրաինայի Անդրկարպատյան մարզի տարածաշրջանային զբոսաշրջության զարգացման կազմակերպության ղեկավար Վասիլ Կոչանի հետ, Հրադեց Կրալովեի երկրամասի տարածաշրջանային զարգացման, դրամաշնորհների և սուբսիդավորման բաժնի ղեկավար Իվանա Կուդրնաչովայի հետ՝ մասնավորապես երկկողմանի զբոսաշրջային ծրագրեր իրականացնելու հնարավորությունները, իսկ Բռնո քաղաքում կազմակերպվող միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսին մասնակցելու հարցը քննարկվեց այդ ցուցահանդեսի կազմակերպման նախագծերի կառավարիչ Յանա Օստրակովայի հետ: Մարտի 8-ին կայացավ ՀՀ Տավուշի մարզպետ Հայկ Չոբանյանի և Հրադեց Կրալովե երկրամասի նահանգապետ Յիրժի Շտեպանի բանակցությունները, որին մասնակցում էին՝ Չեխիայում ՀՀ արտակարգ ու լիազոր դեսպան Աշոտ Հովակիմյանը, Հրադեց Կրալովե երկրամասի ռադայի անդամ Պավել Հեչկոն, նահանգապետարանի աշխատակազմի ղեկավար Յան Լուկաչը, նահանգապետարանի արտաքին կապերի դեպարտամենտի ղեկավար Թերեզա Նիկլիչկովան, նահանգապետարանի արտաքին

կապերի դեպարտամենտի աշխատակից Դոմինիկա Բարեշովան, Հրադեց Կրալովեի ազգային պարկի տնօրեն Ռոբին Բենեշը և այլոք: Բանակցությունների ընթացքում քննարկվեցին՝ երկկողմանի համագործակցության շրջանակներում փոխշահավետ հետաքրքրություն ներկայացնող հարցեր և դրանց նախաձեռնելու հնարավորությունները: Ռոբին Բենեշի հետ քննարկվեց Դիլիջան ազգային պարկի հետ համագործակցության հնարավորությունները, որի շրջանակում 2019թ. մայիսին կկայանա նրա այցը Տավուշի մարզ:

Բանակցությունների ընթացքում քննարկվեց նաև Հրադեց Կրալովեի համալսարանի և ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի միջև համագործակցության հնարավորություններն ու հեռանկարները, որի արդյունքում պայմանավորվածություն ձեռք բերվեց ERASMUS ծրագրի գործողությունների շրջանակներում իրականացնել ուսանողների փոխանակման գործընթացը:

ՀՀ Տավուշի մարզի պատվիրակության այցը Հրադեց Կրալովե ծառայեց իր նպատակին՝ մարզը ներկայացվեց միջազգային հանրությանը, քննարկվեցին համագործակցություն սկսելու մի շարք առաջարկներ տնտեսության տարբեր ոլորտներում, պայմանավորվածություններ ձեռք բերվեցին շարունակել շփումները տարբեր հարթություններում, ինչպես նաև երկկողմանի կապերն ավելի ամրապնդելու նպատակով իրականացնել փոխադարձ այցելություններ ու նախաձեռնել գործնական քայլեր համագործակցության շրջանակներն ընդլայնելու ուղղությամբ:

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ Հ.ՉՈԲԱՆՅԱՆ